

# ԾՐԱԳԻՐ

ԲՈՒՅՍԵՐԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Մանկավարժական ինստիտուտների համար

58  
5-98

ՈՒՍՈՒԹԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ

1987

29 JUL 2010

ՀԱՅՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

№ 47 ՀԵՊԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 47

58

598

Ծ Բ Ա Գ Ի Բ

ԲՈՒՑՍԵՐԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Մանկավարժական ինսիտուտների համար

14.05.2013

13910



747

37

Թաքամ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խմբ. Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Արքագիր Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դլավլիսի լիազոր կ. — 8255. Պատվեր № 58 Տիրաժ 400  
հանձնված եւ արտադրության 27 սեպտ. 1937 թ.,  
ստորագրված և տպագրելու 28 հոկտ. 1937 թ.,

Աւագանության վարակագործան Խնստիտուտի տպաքան,  
Երևան, Մաքքարի փողոց № 17

Խ. Ա. Զ. Մ. Ժ. Կ. Խ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑ ԴՐՈՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Ս Ա Տ Ո Ւ Ն Ե Մ

ԽՍՀՄ ժկն. կից բարձրագույց գպրօցների համամիութեական կոմիտեի նախագահ՝ [REDACTED]

21-ին ոգոստոսի 1937 թ.

## Ժ Ր Ա Գ Ի Բ

ԲՈՒՅՈՒԹԵՐԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՅԻ  
Մանկավարժական ինստիտուտների համար

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բույյութի սիստեմատիկայի առարկան և խնդիրները, նրա գործնական նշանակությունը: Հասկացողություն սիստեմի մասսի: Սիստեմատիկայի ուսմունքի զարգացման համաստ ակնարկ: Բույյութի կլասիֆիկացիան հնագույն բուսաբանների մոտ: Բուսաբանության վիճակը միջին զարերում:

Բուսաբանական այլիների պատմությունը: Առաջին հերթարիումներ:

Բույյութի արհեստական սիստեմներ: Սիստեմատիկայի վիճակը XVIII դարում: Լիննեյի սիստեմը, նրա արժանիքները: Բընական սիստեմ, նրա սաղմնավորումը և տեսական բովանդակությունը: Բնական սիստեմի վերամշակումը: Հոֆմայստրի աշխատանքները: Դարվինի ուսմունքի ազդեցությունը սիստեմատիկայի զարգացման վրա: Ֆիլոգենետիկ սիստեմներ: Բույյութի սիստեմատիկայի այժմյան դրությունը:

Բույյութի սիստեմատիկայի մեթոդները: Պակենտոլոգիական մեթոդ, նրա նշանակությունը բուսական աշխարհի տարբեր խմբերի նկատմամբ: Համեմատական-մորֆոլոգիական մեթոդի բովանդակությունը և նշանակությունը: Սաղմաբանական, ցիտոլոգիական, բիոքիմիական, սերոգիազնոստիկական և աշխարհագործական մեթոդներ: Եքսպերիմենտալ մեթոդ: Սիստեմատիկան վորակես բույյութի մատին յեղած գիտությունների սինթեզ:

Հիմնական տաքսոնոմիստրիկ (կարգաբաշխական) կատեգո-

բիաներ: Հասկացողություն տեսակի մասին և նրա մասնատումը: Համառոտ ակնարկ՝ բուսական աշխարհի տիպերի: Հասկացողություն ստորին և բարձր բույսերի մասին: Ջրիմուներ, սնկեր, մամուներ, պտերանիաններ, մերկասերմ և ծածկասերմ բույսեր:

## Սուրին բույսեր

Թարթիչավորներ: Ընդհանուր բնութագիրը. նրանց տարածությունը ըստ մորֆոլոգիայի, մննդառության տիպի և այլն:

Կանաչ ջրիմուների տիպը: Կանաչ ջրիմուների ընդհանուր բնութագիրը, բջի կառուցվածքը, տալլոմի կառուցվածքը տիպերը: Անսեռ բազմացման հիմնական ձևերը, զոսապոր և սպորների այլ տեսակները: Սեռական պրոցես, նրա հիմնական վարդացիաները: Կանաչ ջրիմուների զարգացման ցիկլի սքեման: Դասերի բաժանումը:

«Բուն կանաչ ջրիմուների» գասը: Դասի տարրերիչ առանձնահատկությունները և նրա բաժանումը կարգերի: Վոլվոների կարգը—վոլվոների բջի կառուցվածքը: Միաբջիջ և գաղութային ձևերը: Պալմելաձև վիճակ: Տիպիկ ներկայացուցիչների կառուցվածքը, ապրելու ձևը, զարգացման ցիկլը և տարածումը: Կարգի բնութագիրը, բջի կազմությունը և գաղութի համարումը: Տիպիկ ներկայացուցիչներ, նրանց ապրելակերպը, բազմացումը և կառուցվածքի առանձնահատկությունները կապված եկոլոգիական պայմանների հետ:

Ուլոտրիքս կանաների կարգը.—բջիջը և տալլոմի կառուցվածքը: Ուլոտրիքսների մորֆոլոգիական վարիացիաները: Կարգի ներկայացուցիչները, նրանց կառուցվածքը. զարգացման ցիկլը, տարածումը և եկոլոգիան: Մի քոնական բջի կարգ. կազմության յուրահատկությունը: Վոշերիա, նրա կենցաղը, կառուցվածքը և բազմացումը: Միփոնյաների այլ ներկայացուցիչները:

«Կոնյուգատներ»-ի (սկզբանի) գաս կամ „conjugatae“, — Դասի ընդհանուր բնութագիրը: Զիգնեմականները սպիրոգիրայի որինակով: Սպիրոգիրայի տարածումը, նրա բջի կառուցվածքը, կոնյուգացիան և զիգոտայի աճման բնույթը: Դեսմիկականներ, նրանց առանձնահատկությունը, ապրելակերպը, զարգացման ցիկլը: Դեսմիկականների տարածումը:

«Խարականներ»-ի գասը: Խարայի մարմիկ կառուցվածքը աճումը և ճյուղավորումը: Սեռական որգանների առանձնահատկությունները: Սեռական պրոցես վեգետատիվ բազմացումը: «Խարական»-ների տարածումը:

Տարաթարթիչ թիչավորների տիպը: Բնդանությունը:

Դիատոմային ջրիմուների տիպը: Դիատոմայինների բջջի կառուցվածքը: Թաղանթի առանձնահատկությունները, քրոմոտիպորներ, պիգմենտներ, վակուոլներ, կորիզ, պահեստի նյութեր: Բջջի բաժանումը: Առոքսոսպոր կազմելը պարզ դիատոմայինների մոտ: Այս խմբի ընդհանուր բնութագիրը:

„Centricae“—նրանց մորֆոլոգիական տարրերությունը, անսեռ բազմացումը, առոքսոսպորներ կազմելը: Զարգացման ցիկլի սխեման և կորիզային ֆազաների հերթափոխումը գիտատոմայինների մոտ: Նրանց տարածումը և ապրելու յեղանակը: Պլանկտոն, ըենտոս և եպիֆիտ զիատոմայիններ: Բրածո զիատոմայիններ:

Գորշ ջրիմուների տիպ: Գորշ ջրիմուները, վորապես ջրային ֆլորայի ներկայացուցիչներ: Մորֆոլոգիական գիշերինցիայի բարձրությունը, վորին նրանք հասել են: Տիպի տարրերիչ գծերը: Բջջի կառուցվածքը, պիգմենտներ, պահեստի նյութեր: Տալլոմի կազմությունը, թելավոր և հյուսվածքավոր ձևեր: Բազմացման ցիկլի տարածությունն որինակներով: Ենտոկարպուսի, դիկտիոտայի, լոմինարիայի և ֆուկուսի: Կարգերի բաժանվելը: Դադարթային և ինտերկալար աճում ունեցող կարգերի խմբեր:

Կարմիր ջրիմուների տիպ: Կարմիր ջրիմուների բջջի կառուցվածքը, պիգմենտների, պահեստի նյութերի և տալլոմի կազմության բնորոշ առանձնահատկությունները: Անսեռ բազմացման բնույթը: Սեռական պրոցես: Ձիոտոկարպ և կարպուսպորներ: Կարմիր ջրիմուների տարածումը, նրանց եկոլոգիան:

Կապտականաչ ջրիմուների տիպ: — Նրանց նկատմամբ բջիջ տերմինի կիրառման պայմանական լինելը, կապտականաչների կազմության յուրահատկությունը: Բնորոշ պիգմենտներ, պահեստի նյութեր, թաղանթի կազմությունը:

Կապտականաշների մորֆոլոգիան։ Միաբջիջ և թելավոր ձևեր։ Բաժանումը։ Սպորներ կազմելը և նրա բիոլոգիական դերը։ Կապտականաշների մնվելու առանձնահատկությունը, տարածումը, ապրելու ձևը—մի քանի լայն տարածում ունեցող ձևերի որի նակներով։

Ընդհանուր ակնարկ ջրիմուռնը ի մասին։—Զրիմուռները վրապես հավաքական հասկացողություն։ Զրիմուռների կառուցվածքի ընդհանուր գծերը, կապված նրանց ապրելու հիմնական միջավայրի հետ։ Առանձին տիպերի ներկայացուցիչների կազմության եյական տարբերությունները։ Զրիմուռների ծագման պրոբլեմը և առանձին տիպերի միջև գոյություն ունեցող ազգակցական կապերը։ Հարիմուռների մասին յեղած պալեոնտոլոգիական նյութի թերի լինելը։ Զրիմուռների նախնիությունը պալեոնտոլոգիական (հնեյաբանական) տվյալների լույսի տակ։ Համեմատական—մորֆոլոգիական տվյալներ ջրիմուռների ծագման մասին։ Զրիմուռների զոսուլորների փիլոգենետիկ նշանակությունը և թարթիչավոր որգանիզմները։ Թարթիչավորները՝ ջրիմուռների հավանական նախնիներ։ Զրիմուռների տիպի ստորին ավատարով բույսերի, եվոլյուցիոն զարգացման հիմնական ուղղությունները։ Կանաչ, դիտումային և գորշ ջրիմուռների տիպերի գլխավոր ստորաբաժանումների միջև յենթազրվող ազգակցական կապերը։ Զրիմուռների գերը յերկրի ժամանակակից բուսականության մեջ։ Զրիմուռների եկոլոգիական տիպերն ըստ նրանց բնակավայրերի։ Պլանկոպն ձևերի կազմության յուրահատկությունը, կապված նրանց ապրելու ձևի հետ։ ցամաքային ջրիմուռներ։

Զրիմուռների գործնական նշանակությունը։ Զրիմուռները ինչպես որգանական նյութ ստեղծողներ։ Զրիմուռների հատուկ ոգտագործումը։ Զրիմուռներից արդյունահանվող, սննդի, բժշկական, գյուղատնտեսական և տեխնիկական նյութեր։

Համացողություն հետերոտրոֆ որգանիզմների մասին։ Անլեռը, միքսոմիցետները և բակտերիաները։ ինչպես վերջինների ներկայացուցիչներ։

Բակտերիաների տիպ։—Բակտերիաների կառուցվածքը (բջիջ տերմինի կիրառման պայմանական լինելը նրանց նըստամամբ), թաղանթը, կորիզային ապարատը, պահեստի նյու-

թեր։ Բակտերիաների պիդմենտացիան։ Ընդհանուր տեղեկություններ բակտերիաների մորֆոլոգիայից։ «Միաբջիջ» բակտերիաներ—նրանց բջիջի ձևերը և թարթելու ձևերը։ Թելավոր ձևեր, նրանց կազմությունը Բակտերիաների բազմացումը, նրա ձևը և տեմպերը։ Սպորներ կազմելը։ Բակտերիաների տարածումը բնության մեջ։ Բակտերիաների սննդառությունը։ Հետերոտրոֆ և խելուրով ձևեր։ Բակտերիաների վերաբերմունքը միջավայրի պայմաններին։ Բակտերիաների տեղը բնության և մարդու կյանքի մեջ։ Նեխման և խմորման բակտերիաներ։ Պարագիտ և պաթոգեն ձևեր, պայքարի ընդհանուր միջոցներ նըստանց գեմ։ Բակտերիաների նշանակությունը կանաչ բույսերի ազոտացության սննդառության գործում։ Բակտերիաների ծագումը։ Հասկացողությունը բակտերիաների ուսումնասիրության առանձնահատուկ մեթոդների մասին։ Բակտերիաների ուսումնասիրության նշանակությունը կյանքի ծագման պրոբլեմի կապակցությամբ։ Կյանքի ծագումը և բույսերի ծագումը։

Միքոմիցի յետների տիպ։—Տիպի ընդհանուր բնութագիրը։ Տարածումը բնության մեջ։ Միքսոմիցետների որինակներ։ կազմաբի կիլը, նրա զարգացման ցիկլը, նրա հասցրած վասը և պայքարի միջոցները։ Միքսոմիցետների ծագումը։

Սնկերի տիպ։—Սնկերի ընդհանուր բնութագիրը։ միցիլիում, նրա տիպերը, նյուվածքանման կազմություններ, սընկի բջջի կառուցվածքը։ թաղանթի կազմությունը, պլաստիգների բացակայությունը, կորիզային ապարատը, պահեստային նյութերը բջիջում։ Սնկերի վեգետատիվ բազմացումը։ Սպորներ կազմելը։ Սպորների տիպերն ըստ առաջացման բնույթի։

Պտղատու ժարմիններ։ Սեռական յերկույթների ընդհանուր բնույթը սնկերի մոտ։ Սեռական պրոցեսի հիմնական ձևերը, սեռական պրոցեսի կապակցությամբ տոաջացող սպորներ։ ասքուպորներ և բազիդիոսպորներ։ Տիպի բաժանումը դասերի։ Ստորին և բարձր սնկեր։

Արխիմիցի յետների դաս։—Վեգետատիվ մարմնի կառուցվածքը։ Անսեռ բազմացում։ Սեռական պրոցես։ Կազմաբի սածիլի «սև վոտիկը»։ Վարակի արտաքին տեսքը և նրա վնասը։ Պարաղիտի բիոլոգիան և նրա զարգացման ցիկլը, պայ-

քարը պարագիտի դեմ, Ուսկեղիում ցեղի սեռական պրոցեսը Պոլիֆագուար. Նրա կառուցվածքը և զարգացման ցիկլը:

Ֆիկոմից ետների դպս.—Տալումի կառուցվածքը: Ասսեռ բազմացում և սեռական պրոցես: Ուսմիցեաների և գիգոմիցեաների յննիթագասերը:

Ոսմից ետներ—Ոսմիցեաների եկոլոգիայի առանձնահատկությունները: Մոնոբլիֆարիսը. Նրա ազընկու կերպը, բազմացումը: Սապրոլեգնիաների ընտանիքը: Սապրոլեգնիայի զարգացման ցիկլը:

Գերոնոսպրավորների ընտանիքը: Կարտոֆիլի սունկը: Պարագիտի հիփերի դասավորությունը տիրոջ մարմնում և սնկի ազդեցությունը: Սպորանգիաներ կաղմելը և նրանց ծլումը: Պարագիտի պահպանումը: Պայքարի միջոցները կարտոֆիլի սնկի դեմ: Պարագիտաների ուրիշ որինակներ պերոնորսավորների ընտանիքից: Հովվապարկի «սպիտակ ժանգը», խոզողի միջիուն և այլն: Ոսմիցեաների զարգացման ցիկլի սխման ու կորիզային ֆազաների փոխարկումը:

Զիգոմից ետներ,—կարգի մորֆոլոգիական և եկոլոգիական բնույթը: Սեռական պրոցեսի յուրահատկությունը: Մուկորը, վորպես կարգի տիպիկ ներկայացուցիչ, տալումի կառուցվածքը, սպորատվությունը, սեռական պրոցեսը: Հետերոտալիկիմ: Սեռական պրոցեսի ցիտոլոգիան: Զիգոտայի աճումը. սաղմային սպորանգիա: Սնկի տարածումը: Սապրոֆիտ զիգոմիցեաներից ուրիշ հաճախակի հանդիպուներկայացուցիչներ: Եմպուզա: Ֆիկոմիցեաների դասի գործնական նշանակությունը:

Ասքոմից ետների դաս:—Ասքոմիցեաների միցելիումի կառուցվածքը, պարկը: Ասքոմիցեաների զարգացման ցիկլը Պիրոնեմայի որինակի վրա: Հապլոիդ և դիպլոիդ ֆազաները պարկավոր սնկերի ոնտոգենեզում: Ասքոմիցեաների սպորատվության տարբեր տիպեր: Պաղատռ մարմինները և նրանց տիպերը.

Սկզբնապարկագորների կարգ:—Խմբաման սնկեր, նրանց մորֆոլոգիան. բազմացումը. տարածումը և տնտեսական նշանակությունը:

Եկզոմաքերի կարգ:—Տափրինան, վորպես կարգի տիպիկ ներկայացուցիչը: Այս սնկերի հետ կապված հիվանդությունները և նրանց դեմ պայքարելու միջոցները:

Պէկտատոքների կարգ:—Բնդհանուր բնութագիրը ասպերգիլուսի և պենցիլիումի որինակների վրա: Կարգի տարածումը և գործնական նշանակությունը:

Պերիոպորների կարգ:—Ալլացող սնկեր: սփերոսակակա: Ալլացող սնկերի պտղատու մարմինների ախպերը: Ալլացողուների առաջանահատկությունների առանձնահատկությունները և նրանց դեմ պայքարելու միջոցները:

Պիրենոմից ետների կարգ:—Սեպասնկեր (СПОРЫНЬЯ), նրա զարգացման ցիկլը, հասցրած վնասները և պայքարի միջոցները:

Դիսկոմից ետների կարգ:—Պեցիցա, սկլերոտինիա և մորփ (СМОРОДИК) ինչպես կարգի ներկայացուցիչներ:

Դետնասնկերի կարգ (ТРИОФЕЛИ). Բնդհանուր բնութագիրը. կարգի ներկայացուցիչների մորֆոլոգիան և եկոլոգիան ու նրա գործնական նշանակությունը:

Բազիգիոմից ետների դաս:—Բազիգիոմիցեաների միցելիումի կառուցվածքը: Հապլոիդ և դիպլոիդ միցելիում. բազիգիումներ, ֆրակմու և հոլոբազիգիումներ. բազիգիու սնկերի զարգացման ցիկլի սխման և կորիզային ֆազաների փոխարկումը: Բազիգիու սնկերի պտղատու մարմինները:

Հոլորազիգիոմից ետներ:—Հիմնոմիցեաների պտղատու մարմինները: Հոլորազիգիոմից ետների կարգ: Պտղատու մարմնի կառուցվածքը և նրա զարգացումը: Սպորաների առանձնացումը: Հիմնոմիցեաների պտղատու մարմինների տիպերը:

Թիթեղավորների ընտանիքը. Նրա լայն տարածված ներկայացուցիչները:

Բազմածալքավորների (արուտովիկների) ընտանիքը. Տնային սունկը, նրա եկոլոգիան, հասցրած վնասները և պայքարի միջոցները: Ընտանիքի պարագիտ ներկայացուցիչները, նրանց տարածումը, եկոլոգիան ու պայքարը նրանց դեմ: Բոլետու ցեղը:

Գաստերապորների կարգ:—պտղատու մարմնի կառուցվածքի առանձնահատկությունը և զարգացումը: Տիպիկ ներկայացուցիչները: Ֆրազմորազիգիումիցեաները. Մը կների կարգը. մրիկի առաջացրած հիվանդության բնդհանուր բնույթը:

թլու Յորենի փոշեմբիկը, կորեկի մըիկը, յորենի քարեմբիկը, յեգիպտացորենի բշտիկավոր մըիկը, մըիկների ընդհանուր բնութագիրը և զարդացման ցիկլը: Մըիկի պրակտիկ նշանակությունը և պայքարի միջոցները նրա դեմ:

Ժանգերի կարգ,—Հացահատիկների ժանգը, նրա տառածումը և գործնական նշանակությունը: Հացահատիկների ժանգի զարդացման ցիկլը: Մի քանի որինակներ, գործնականապես կարեոր այլ ժանգանկերից: Բիորդիական տեսակները և բիուտիպերը:

Ա. Ն կ ա տ ա ր ս ն կ ե ր: ընդհանուր ակնարկ սնկերի մասին: Համեմատական-մորֆոլոգիական և հնեյաբանական տվյալներ ունեկերի փիլոդենեղի հարցերում: Հիմնական տեսակետներ սնկերի ծագման մասին՝ մոնոֆիլետիկ և պոլիֆիլետիկ: Զարգացման ցիկլի ուսումնախրության նշանակությունը սնկերի փիլոդենեղի վերականգման համար: Արխիմիցետների գրությունը սիստեմում: Արխիմիցետների և փիլոմիցետների միջև փիլոդենետիկ կապի հնարավորությունը: Ուսմիցետները և զիգոմիցետները, ինչպես փիլոմիցետների մասնագիտացած հյուղեր: Ֆիլոդինետիկ կապը ստորին և բարձր սնկերի միջև:

Սնկերի բիոլոգիայի հիմնական գծերը: Սնկելու ձեր: Կյանքի սապրոֆիտ ձեր, պարագիտիզմ և նրա տարրեր ձեռեր: Ինչից ե կախված բույսերի մոտ սնկային հիվանդությունների նկատմամբ վոչ դյուրըմբոնելիությունը\*: Սնկերի սիմբիոտիկ հարաբերություններն ուրիշ որգանիզմների հետ: Միկոբիոաներ: Սնկերի բազմացման հներդիան, նրանց տարածումը բնության մեջ: Սնկերի ցերը բնության կյանքում: Սնկերի անտեսական նշանակությունը. պաթոգեններ, թունավորներ, ուտելի և այլ սնկեր:

Քարաքոսներ.—Կենակցության յերեսութը ստորին բույսերի մոտ, ենգոփիտներ, պարագիտաներ, սիմբիոններ, քարաքոսը ինչպես սնկի և ջրիմուտի հարաբերական կայուն կենակցություն: Քարաքոսի խավաշերտի մորֆոլոգիան. կեղեային, թերթային և թփուտային քարաքոսներ: Քարաքոսի անատոմիան. քարաքոսի կոմպոննենուների փոխադարձ դասավորու-

\* Այստեղ անհրաժեշտ հն տվյալներ բույսերի փիլոդինեղից. (տես, պեղջնիս ծրագիրը):

թյունը, հետերոմեր և հոմեոմեր քարաքոսներ: Քարաքոսի կոմպոնների սիստեմատիկան դրությունը: Մնկի և ջրիմուտի ինքնուրությունը ապացույցները քարաքոսում: Հարաբերությունը նրանց միջև: Կենակցության հարաբերական կայունությունը, քարաքոսի բաղմացումը:

Քարաքոսների տարածումը և գերը բնության մեջ: Նրանց տնտեսական նշանակությունը: Միմբիոզը բուսական աշխարհում և կենդանիների ու բույսերի հետ:

### ԲԱՐՁՐ ԲՈՒՅՍԵՐ

Բարձր բույսերի ընդհանուր բնութագիրը, բջջի կառուցվածքը: Հյուսվածքների դիֆերենցումը: Մորֆոլոգիական բաժանումը և կազմության համապատասխանելն ապրելու միջավայրին: Անեւու բազմացման առանձնատկությունները: Սեռական որգանների կառուցվածքի սպեցիֆիկ գծերը: Զարգացման ցիկլի սիստեմն:

Արխեգոնիալ բույսերի տիպը, նրա տարրերիչ գծերը և գաների բաժանումը, նրանց կարճ բնութագրով:

Մամուանմանների գաս, մամուանմանների մարմնի մորֆոլոգիական մամնատումը: Անատոմիական կառուցվածքի ընդհանուր գծերը և սերունդների հաջորդականության առանձնահատկությունները: Լյարդամամունների յինթագաս, մարշանցիան, նրա տարածումը, մորֆոլոգիան և անատոմիան, վեգետատիվ և սեռական բազմացում, սպորների ձևավորվելը: Սպորների ցրումը և ծլումը: Մարշանցիան, ինչպես մարշանցիավորների կարգի ներկայացուցիչ:

Հասկացողություն՝ յունգերմանների մասին, կազմության և բազմացման տիպիկ գծերը: Մարշանցիանների և յունգերմանների կարգի համեմատական բնութագիրը, լյարդամամունների տարածումը և եկոլոգիան:

Տեղ և տվյալ մամունների յենթագաս, թենթագասի բնութագիրը: «Կուրի կտավատ»-ը: Մորֆոլոգիական բաժանումը, ցողունի կառուցվածքը, տերենների կառուցվածքը, տերենների եկոլոգիան: Սեռական որգանների դասավորությունը: Անտերիդիում և արխեգոննիում: Բեկմանավորության պրոցեսը: Սպորոգն, կափարիչը, նրա ծագումը՝ տուփիկի արտաքին և

Ներքին կառուցվածքը: Սպորների զարգացումը: Սպորների ցրելը, տուփիկի բացվելը, պերիստոմ, նրա կառուցվածքը և դերը: Սպորների ծլումը: «Կուուի կտավատի»-ի զարգացման ցիկլի բնորոշ լինելը տերեամամուռների համար: Կանաչ մամուռների կարգի բնութագիրը: Գամետոփիտի մորֆոլոգիայի և անատոմիայի գլխավոր վարիացիաները: Հատվածավոր պերիստոմ սաեգոկարպ և կլեյստոկարպ մամուռներ: Սփագնումի մամուռների կարգը: Ցողունի և տերեկի մորֆոլոգիական և անատոմիական կառուցվածքը: Կեղևի և տերեների մեռած ըրջիների եկոլոգիական նշանակությունը: Սեռական որգանները և բեղմավորությունը: Սպորոգնների զարգացումը և սպեցիֆիկ առանձնահատկությունները: պրոտոնեմա (նախածիլ):

Մամուռների տարածումը բնության մեջ: Կանաչ և սփագնումի մամուռների եկոլոգիան: Մամուռների մանակցությունը ցամաքի ճահճացման և լճերի մամուռակալման պլրոցեսում:

Պատերանմաններ.—Զարգացման ցիկլի սիեման. պսիլոֆիտների դաս, դասի ընդհանուր բնութագիրը: Ռինիա, խորնեա, աստերոքսիլոն, նրանց մորֆոլոգիան, անատոմիայի եյտական գծերը: սպորատվությունը, պսիլոֆիաների ժամանակաշրջանը և կյանքի պայմանները:

Քետնամուշկների կարգ:—Ընդհանուր բնութագիրը:

Քետնամուշկների կարգ:—Գետնամուշկների ընտանիք, գետնամուշկի մորֆոլոգիական և անատոմիական կառուցվածքը, սպորակիր հասկիկ, սպորանգիումների և սպորների կառուցվածքը: Նրանց զարգացումը և ծլումը: Նախածլի կառուցվածքը և նրա բիոլոգիայի առոնձնահատկությունները: Սեռական որգանները և սեռական պլրոցես, սպորոֆիտի զարգացումը: Ժամանակակից գետնամուշկների տարածումը: Սելագինելլայի ընտանիքը, սելագինելլայի մորֆոլոգիական բնութագիրը:

Սպորատվությունը, մակրո և միկրո սպորներ, սելագինելլայի սպորների ծլման առանձնահատկությունները: Նախածըլի սեղուկցիա, սպորոֆիտի զարգացումը: Լեպիդոլինգունների ընտանիքը: Լեպիդոլինգունների մորֆոլոգիական և նրա անատոմիական կառուցվածքը: Սիգիլյարիաներ, սիգիլյարիայի սպորո-

կաշրջանը: Կիսաականջիկների, (полуцниковые) կարգի կարձընութագիրը:

Զիածետանմանների դաս: դասի ընդհանուր բնութագիրը:

Զիածետների կարգ: վերյերկրյա և ստորյերկրյա մասերի մորֆոլոգիան, ցողունի անատոմիական կառուցվածքը: Սպորների կառուցվածքը: Սպորների կառուցվածքը և զարգացումը: Գամետաֆիտի կառուցվածքը: Սեռական պլրոցես, սպորոֆիտի զարգացումը: Ժամանակակից ծխածետների համառոտ բնութագիրը, նրանց տարածման ժամանակը: Սեպատերեցվագորների կարգ, նրանց անատոմիան և մորֆոլոգիան, սպորալընթագործյան առանձնահատկություններն ու գլխավոր վարիացիաները:

Պատերանմանների մորֆոլոգիայի տարբերիչ հատկանիշները: Նրանց տարածումը և դերը յերկրաբանական անցյալ ըրջաններում: Եռասպորանգիատ պտերների յենթագաս: Ուալեբզի (УЖОВНИК) կարգը: Կարգի համառոտ բնութագիրը: Տերևի դիֆերենցումը, սպորանգիումների կառուցվածքը և զարգացումը: Գամետոփիտ, սեռական որգանները: Տարածումը: Լեպտոսպորների յենթագաս: Բուն պտերների կարգ: Սպորոֆիտը, նրա մասնատումը, տերևի և ցողունի կառուցվածքը: Մնող և սպորակիր տերմներ, սպորների կառուցվածքը: Սպորանգիումների զարգացումը և կառուցվածքը: Սպորանգիումների ցրումը: Սպորների ծլումը: Նախածիլ սեռական որգանները բեղմանավորություն: Սպորոֆիտի զարգացումը: Մեր ֆլորայի պտերների գլխավոր ներկայացուցիչները: Ծառանման պտերներ, ջրային պտերների կարգ, նրանց զարգացման ցիկլի գլխավոր տարբերիչ գծերը:

Մերկասերմերի եյական առանձնահատկությունները: Զուգահեռականությունը նրանց և պտերանմանների, կազմության և զարգացման ցիկլի մեջ: Մերկասերմերի միկրո և մակրոսպորոֆիններ: Մերմաբողբոջ, սերմ, նրա նշանակությունը, դասերի ծավալը, ներկայումս ապրող և բրածո մերկասերմերի տարածումը: Մերկասերմերի դասերի կարգերը:

Մերկասերմերի կարգ:—Ընդհանուր բնութա-

գիրը, սագորեների (саговниковыe) կարդ, սագորեների մարմ-  
նի բաժանումը, բնի անատոմիան, տերեկի մորֆոլոգիան, սագո-  
րերը՝ կարգի տիպիկ ներկայացուցիչներ մակրոսպորոֆիլներ,  
նրանց կառուցվածքը և դասավորությունը, մակրոսպորանգիում-  
ներ։ Մակրոսպորի զարգացումը, իդական նախածիլ և արիեկո-  
նիում։ Միկրոսպորոֆիլներ, նրանց կառուցվածքը, դասավորու-  
թյունը։ Միկրոսպորներ կազմելը, միկրոսպորի ծլումը, Փոշոտում  
և բեղմանավորություն, սերմերի զարգացումը։ Թեթև ծանոթու-  
թյուն սագորեների մյուս ներկայացուցիչների հետ:

Բենետի արք. — Բենետիների տարածման ժառանակաշրջանը: Հնդկանուր պատկերացում նրանց մորֆոլոգիայի և անտոմիայի մասին սպորատվության առանձնահատկությունները: «Յերկանո ծաղկիներ»: Գինզգոների կարգ, գինզգոյի վեգետատիվ որգանների, մակրո և միկրոսպորանզիոնների և սպորոֆիլների մորֆոլոգիան: Բեղմնավորության պրոցես, սերմեր: Գինզգոյի տարածումը ներկայումս և անցյալում: Կորդախտների կարգ: Տարածման շրջանը: Համառոտ ակնարկ բազմացման որդանների, մորֆոլոգիայի և անտոմիայի մասին:

Փշատեղեների մորֆոլոգիան  
աճման բնույթը և տեղեների ձյուզավորումը: «Արական» ծաղիկը  
կառուցվածքի պլանը, միկրոսպորոֆիլների կառուցվածքի տիպեր,  
միկրոսպորանգիումների և միկրոսպորների զարգացումը. միկրոս-  
պորի ծլումը, փոշեպարկերի բացումը: Իգական կոնզոմ (կոն.  
шишկա), մակրոսպորանգիումի կառուցվածքը. մակրոսպորի  
զարգացումը, նրա ծլումը, նախածիլ և արխեգոնիում. փշատեղե-  
ների փոշատումը և բեղմանավորությունը: Սաղմի և սերմի զար-  
գացումը: Սոճիների ընտանիք: Գենի, (պիչտա) յեղենի, լիստվե-  
նիցա: Կեդր և սոճի ցեղերի ներկայացուցիչների տարածումը,  
բիոլոգիական առանձնահատկությունները և գործնական նշանա-  
կությունը:

Կիպարիսների ընտանիքի հատկանիշները: Կիպարիս, զիհի (можевельник), բորանոճի (туя): Գեղծինիների ընտանիք (тиловые). գեղծինիների կարգ, դլամափոր ներկայացուցիչները, ծագիկների կառուցվածքը և սպորների ծելլու առանձնահատկությունները: Ակնարկ արխեգոնատ բույսերի ծագման և ելուց ցիայի մասին: Արխեգոնայատները—ցածրագային ֆլորայի ներ-

կայացուցիչներ։ Պալեոնտոլոգիական տվյալներ ցամաքային բույսերի առաջացման շրջանի մասին։ Հնագույն ցամաքային բույսերի կազմության պրիմիտիվ լինելը։ Բույսերի ցամաք դուրս գալը։ Առաջին ցամաքային բույսերի սեւական և անսեռ սերունդների փոխարաբերությունները։ Դամետոֆիտի եվոլուցիան, նրա ռեգուլցիան, սիֆոնոզամիայի ծագումը։ Սպորոֆիտի եվոլուցիան, նրա մորֆոլոգիական և անտառմիական կառուցվածքը։ Պտերանմանների ազգակցական կապերը, մերկասերմերի և պտերանմանների ֆիլոգենետիկ կապերը։ Մերկասերմեր՝ ցամաքային բույսերի մի ետապ։

Ծածկասերմ բույսերի տիպը տիպի տարբերիչ առանձնահատկությունները: Ծածկասերմերի մորֆոլոգիական բաղմաղանությունը և անատոմիական դիֆերենցիան բարձրությունը: Ծաղկի, սեռական պրոցես, սերմի և պտղի զարգացումը: Ծածկասերմերի բաժանումը յերկշաքիլավորների և միաշաքիլավորների գասերի: Այդ բաժանման պայմանական լինելու:

ՅԵՐԿԱՄՔԵԼՄՎՈՐՆԵՐԻ ԴԱ

Բաղմապտղիկավորների կարգ. կարգի ընդհանուր բնոււթագիրը. ծաղկի կազմության պլրմիտիվ լինելու հատկանիշները: Մագնոլիաների ընտանիք: Ընտանիքի մորֆոլոգիական առանձնահատկությունները, անատոմիական կազմության բնորոշ գծերը, աշխարհագրական տարածումը: Գլխավոր ներկայացուցիչները:

Գորտնուկայինների ընտանիք. ծաղկի կառուցվածքի հիմնական վարիացիաներ, ացիկլիկ, հեմիցիկլիկ և ցիկլիկ ծաղկիներ. Պարզ և բարդ ծաղկապատճանավոր ծաղկիներ. Ծաղկի սիմետրիայի տիպեր. Ծաղկակալի կառուցվածքը. Նեկտարանցներ. Վեգետատիվ մասերի բնութագիրը. Տարածումը, գլխավոր ցեղերը. Ըստանիքի գործնական նշանակությունը:

Խաչիւ աշած պահապահ կությունների կարգի տարրեւությունը առաջանաւ է առաջանաւ հաստկությունները. Խաշխաջների ընտանիք, ընտանիքի գլխավոր ներկայացուցիչների ծաղկի կաղմության պրիմիտիվ լինելը: Ծաղկի սպեցիալիզացիան անձնուերի (Ճամանկաց) յենթալիւտանիքում: Յեղեր.—Խաշխաշ, կանթեղիսոտ, փամփիկ: Գլխավոր ներկայացուցիչների տարածումը, բիոլոգիան, գործնական նշանակությունը:

Խաչածաղիկների ընտանիքը. ծաղկի և ծաղկափթության կառուցվածքը. Պաղի կառուցվածքի հիմնական վարիացիաները. Սերմի կառուցվածքը և սաղմի մասերի զասավորությունը. նրա մեջ՝ Վեգետատիվ մասերի տարբերիչ առանձնահատությունները. Ընտանիքի ծավալը և տարածումը. Խաշխաշածաղիկների կարգի ազգակցական կապերը:

Վարդաղիկների կարգ. կարգի բնութագիրը. Վարդատղիկների ընտանիք. Ծաղկի կառուցվածքի հիմնական վարիացիաները. ծաղկակալի ձեզ, անդրոցեռմի և գինեցեռմի կառուցվածքը. Պատուղներ և նրանց տարբեր տիպերը. Վեգետատիվ որգանների բնութագիրը, բույս վարդածաղիկների յինթաընտանիք, մորենի (մալինա) յելակ, մատնունի (լապչاتկա), կրճիկախոտ (գրավիլատ). Խնձորենիների յինթաընտանիք՝ խնձորենի, տանձենի, արոսենի (քանինա), ցուպտկի (սղնի), Բալենիների յինթաղաս. նշենի, բալենի և այլն. Ընտանիքի գործնական նշանակությունը. Լորազգիկների ընտանիք. Նրա բնութագիրը, ծաղկի, պտուղ, սերմեր, վեգետատիվ մասեր. Ընտանիքի ծավալը. Միմողների յինթաընտանիք. Միմողայի և ակացիայի ցեղերը. Ցեղալպիկների յինթաընտանիք. Թիթեռնածաղիկների յինթաընտանիքը, նրա վլխավոր ցեղերը. Ընտանիքի գործնական նշանակությունը. Ազգակցական հարաբերություններ կարգի նկատմամբ. Վարդածաղիկների հարաբերությունը բազմապտղիկավորների հետ.

Հովանոցավորների կարգ. նրա կարձ բնութագիրը. Հովանոցավորների ընտանիք. Ծաղկափթության կառուցվածքը և բիոլոգիական նշանակությունը. Ծաղկի կառուցվածքը. Ցածրադիր սերմարանի ծագումը. Հովանոցավորների պտուղների և սերմերի մորֆոլոգիական և անտառմիական կառուցվածքը. Վեգետատիվ մասերը. Գլխավոր ներկայացուցիչները. Ընտանիքի գործնական նշանակությունը, նրա ծավալը և տարածումը. Հովանոցավորների գրությունը սկզբնածածկավորների սիստեմում:

Սկզբնածածկավորների մի քանի այլ ընտանիքներ. Ուռենիների ընտանիքը. Ընդհանուր բնութագիրը. Ցեղեր—ուռենի և կաղամալի. նրանց տարածումը, բիոլոգիական առանձնահատությունները և տնտեսական նշանակությունը. Կեչիների ըն-

տանիք. Կեչու, լաստենու (օլխա), Ընկուզենու արական և իգաւական ծաղկափթությունների կառուցվածքը և ծաղկելը. Թվածցեղերի գլխավոր տեսակների գործնական նշանակությունը և բիոլոգիական առանձնահատությունները:

Հաճարենու ընտանիք. Հաճարենու կարգի բնութագիրը. Վլուսկայի (պլուսկա) ծագումը. Ընտանիքի աշխարհագրական տարածումը և հաճարի ու կազնու գործնական նշանակությունները:

Խենոպիացենու ընտանիք. Վլուսկայի կազմությունը, վերետատիվ մասերի առանձնահատությունները. Ընտանիքի տարածումը, գլխավոր ցեղերը. Մեխազգի գիների ընտանիք. Ալղինե և արենարիա յինթաընտանիքների ընդհանուր բնութագիրը. Մեր ֆլորայում տարածված ցեղերը:

Կրկնածածկավորների (ՎՏՈՐԻԿՆՈՒՐԵԿ) (միացած թերթիկավորներ), յինթադասի հատկանիշները. Միացած թերթիկավորության ծագումը, նրա գործնական նշանակությունը. Հինգ և չորս շրջանային ծաղկեներ:

Խողովակածաղիկների կարգ. Խոտաբույսերի ընտանիք, հատկանիշները, տարածումը և տիպեր ներկայացուցիչները. Շրթնածաղիկների ընտանիք. Վեգետատիվ որգանների կազմությունը. Ծաղկելը, բաժակի և պսակի վարիացիաները. Մարդրոցեյումի հիմնական ձեռքերը. Գինեցեյում. Շրթնածաղիկների ծաղկելի եկողիքան. Ընտանիքի ծավալը և տարածումը. գլխավոր ցեղերը:

Պերսոնատու կարգը. մորմերի ընտանիքը. Ծաղկի կառուցվածքը. Մորմի ցեղը. կարտոֆիլ նրա ծագումը, տնտեսական գործածությունը, սորտային տարբերությունը. Պամիզոր, կարմիր պղպեղ, ծիամիոտ, բանդ (బելենա) և ուրիշներ. Ընտանիքի գործնականութեն կարենոր ներկայացուցիչները. Սկրոփուլարիաների (խածաղիկների) ընտանիքի սահմաններում. Ցեղերի տարածված ներկայացուցիչների մորֆոլոգիական և բիոլոգիական առանձնահատությունները. Աղեկատիկ (коровյակ), կտավախոտ, սկրոփուլարիա, վերոնիկա, մատնետունկ (наперстянка), կովցորեն, աքլորբունկ, թեփարմատ (петровкрест), խլածաղիկների գործնական նշանակությունը. Ճրագախոտի (заразиха) ընտանիքի բույսերի սիստեմատիկայի—2:

Ճրագախոտ (կաղնձի), նրա բիոլոգիան, վնասը և պայքարի միշտոցները:

Զանգակածաղիկների կարգ. բնութագիրը. բարդածաղիկների ընտանիք. ծաղկափթության կառուցվածքը, բաժակի վարիցիաները, պսակի հիմնական ձևերը. անգրոցեյում և գինեցեյում. բարդածաղիկների սեռերի բաշխումը. պատյանի և ընդհանուր ծաղկակալի ձեզ: ծաղկափթության բիոլոգիական նշանակությունը: Բարդածաղիկների վեգետատիվ որգանների բնութագիրը: Խողովակածաղիկների և լեզվակածաղիկների յենթաընտանիքներ: Նրանց գլխավոր ներկայացուցիչները: Ընտանիքի տարբերիչ առանձնահատկությունները, տարածումը և տնտեսական նշանակությունը:

Միաշաքիլավորների դասը. շուշանածաղիկների կարգն ինչպես յելատիպ միաշաքիլների համար: Շուշանաղղիկների ընտածաղի, պտղի և սերմի կառուցվածքը. վեգետատիվ որգանները. կարեռ ներկայացուցիչները և նրանց գործնական նշանակությունը: Հիրիկների ընտածաղի կազմությունը. ուեղուկցիանդրոցեցումի շրջանում. ծաղկապատյանի թերթիկների և սընակի ճյուղավորումների սպեցիալիզացիան. Հիրիկ և շափրան (կրկում), հիրիկների հարաբերությունը շուշանաղղիկների հետ:

Յունկագինացեայի ընտածաղիկները. վուշիդեաների ընութագիրը. վուշուումը, կապը շուշանաղղիկների հետ. Որխիդեաների կարգ: Որխիդեաների ընտածաղիկների ընտածաղիկների փոշուումը: Դարվինի աշխատությունները: Որխիդեաների ծաղկի համեմատումը շուշանաղղիկների հետ: Որխիդեաների վեգետատիվ որգանները: Ընտանիքի ծաղկալը և տարածումը:

Թեփուկածաղկիների կարգ. խոտազգիկների ընտանիք. խոտազգիկների ծաղկափթությունների հիմնական ափերը. հասկի կառուցվածքը. հասկի մասերի մորֆոլոգիական նշանակությունը: Խոտազգիկների պտղի կառուցվածքը. վեգետատիվ կյանքի որգանները. խոտազգիկների գլխավոր ցեղերը: Կուլտուրական ներկայացուցիչները, նրանց ծագումը և նշանակությունը: Խոտազգիկների նշանակությունը:

Բոշիների կարգ. բոշխերի ընտանիք. տարբերիչ առանձնահատկությունները, ծաղիկների կառուցվածքի բազմազանությունը՝ յեղեղ, երիտոֆորում (պաշաճա), բոշխ. տարածումը

և գործնական նշանակությունը: Ծածկասերմ բույսերի ծագումը և եվոլուցիայի հիմնական ուղղությունները: Ծածկասերմերի և մերկասերմերի համեմատումը, մակրո և միկրոսպորների զարգացման ու ծլման տեսակետից: Ծածկասերմերի սաղմապարկի մասերի մեկնաբանությունը (հոմոլոգիզացիա): Ծածկասերմերը վորպես արխեգոնատ բույսերի եվոլուցիայի հետագա ետապ, ազգակցական կապեր միաշաքիլավորների և յերկաքիլավորների մեջ: Ծաղկի կառուծվածքը, անատոմիական կառուծվածքը, շաքիլների քանակը, միաշաքիլավորների տարբերիչ հատկանիշների դուրս բերելու հնարավորությունը բազմապատղիկների հատկանիշներից: Բաժանաթերթիկ և միացյալ թերթիկ: Յերկաքիլավորների հարաբերությունը: Վետաշտայնի հայացքները ծածկասերմերի ծագման մասին: Ծածկասերմերի բեղմանավորության պրոցեսի ծագման թեորիան. ծաղկի ծագման թեորիաներ: Խմբի նշանակությունն ըստ Վետաշտայնի: Վետաշտայնի հայացքների քննադատությունը: Հալլիֆի թեորիայի հիմնական գրույթները. ծաղկի ստրոբիլար թեորիան, նրա հիմքը: Բազմապատղիկավորները, ինչպես ծածկասերմերի հավանական նախնիներ: Մոնոխամիդիների դրությունը սիստեմում ըստ Հալլիֆի հայացքների: Ենգելսի պատկերացումը պրիմիտիվ ծածկասերմերի մասին և նրա քննադատությունը: Ծածկասերմերի եվոլուցիայի հիմնական ուղղությունները: Ենտոմոփիլ ցեղերը: Ենտոմոփիլ ֆլորայի կան ուղղությունները: Կապված ծաղկի և ծաղկափթության ըստպեցիալիզացիայի հետ: Անեմոփիլ կարգերը եվոլուցիայում: Բուսական աշխարհի եվոլուցիայի ընդհանուր սիեմման. նրա հիմնական ետապները և ուղղություն ավող ֆակտորները: Մարգուգերը բուսական աշխարհի փոփոխման մեջ:

## ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԶԵՐՆԱՐԿՆԵՐ

Курс ботаники, под редакцией Л. И. Курсанова и  
М. И. Голенкина. З-е изд. М. 1937 г.

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Л. И. Курсанов, Н. А. Камарницкий, Б. К. фло-  
ров. Курс низших растений М. Л. 1937 г.

М. И. Голенкин. Курс высших растений. М. Л.  
1937 г.

Н. И. Кузнецов. Введение в систематику цветковых растений, 2-е изд. Л. 1936 г.

ԽԱՐԱԳԻՐ՝ ԱԿԱՊԵՄԻԿ. Բ. Ա. ԿԵԼԼԵՐ



«Ազգային գրադարան»



NL0261539

51 13910

ԳԻՆԸ 60 Կ.